Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 395 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 1400 շահառուի հումանիտար աջակցության ցուցաբերում՝ առաջնային կարիքները հոգալու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Գերմանական կարմիր խաչի ընկերություն
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	30,650,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված մոտ 1400 շահառու: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է պատկան լիազոր մարմինների և տեղական իշխանությունների աշխատակազմերի հետ համագործակցության արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 14,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) բարձերի ձեռքբերում և տրամադրում՝ 1,050,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում.

		3) ծածկոցների ձեռքբերում և տրամադրում՝ 4,900,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 4) ծալովի մահճակալների ձեռքբերում և տրամադրում՝ 9,450,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 5) արկղերի ձեռքբերում՝ 210,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 6) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 400,000 դրամ, 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 7) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 640,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 23-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 14,000,000 դրամ արժողությամբ. 2) բարձերի ձեռքբերում և տրամադրում՝ 1,050,000 դրամ արժողությամբ. 3) ծածկոցների ձեռքբերում և տրամադրում՝ 4,900,000 դրամ արժողությամբ. 4) ծալովի մահճակալների ձեռքբերում և տրամադրում՝ 9,450,000 դրամ արժողությամբ. 5) արկղերի ձեռքբերում՝ 210,000 դրամ արժողությամբ. 6) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 400,000 դրամ արժողությամբ. 7) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 640,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր՝ 400,000 դրամ արժողությամբ, որը ներառում է ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 400,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ